

### ՆԱԲԻՆԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության ավագ սպա, փոխգնդապետ  
ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի միջազգային և եվրոպական  
իրավունքի հայցորդ



## ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՅՄԱՆ (ԻՄՊԼԵՄԵՆՏԱՅԻԱՅԻ) ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ելնելով զինված ընդհարումների ժամանակ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության անհրաժեշտությունից՝ հեղինակը կարևորում է միջազգային մարդասիրական իրավունքի (ՄՄԻ) անշեղորեն կատարումը: Հոդվածում ուսումնասիրվում է ՄՄԻ-ի իմպլեմենտացիայի միջազգային մեխանիզմները և դրանց գործողությունը ապահովող իրավական միջոցները, ինչպես նաև այդ միջոցների գործնականում իրագործման հետ կապված խնդիրները: Գոյություն ունեցող միջազգային իրավական համակարգի համատեքստում կարևորվում է մասնակից-պետությունների և միջազգային կազմակերպությունների համատեղ ջանքերով ձեռնարկվող ՄՄԻ-ի կատարմանն ուղղված միջոցները: Եզրափակիչ մասում, ամփոփելով առկա խնդիրները, մատնանշվում է ՄՄԻ-ի նորմերի խախտման համար պետությունների միջազգային պատասխանատվության ինստիտուտի կատարելագործումը՝ որպես ՄՄԻ-ի նորմերի և մարդու իրավունքների խախտումները զսպող կարևոր միջոց:

*Հիմնարար բառեր - ՄՄԻ իմպլեմենտացիա, զինված ընդհարում, մարդասիրական իրավունք, մարդու իրավունքներ, իմպլեմենտացիայի մեխանիզմներ:*

Ձինված ընդհարումների փաստացի վերլուծությունը մատնանշում է, որ անկախ պատմական ժամանակաշրջանից և քաղաքակրթական ձևերից, զինված ընդհարման կողմերին բնորոշ են դաժանությունը, բռնությունները, ավերածությունները, որոնք, անշուշտ, ուղղորդվում են մարդու հիմնարար իրավունքների կոպիտ խախտումներով և ազատությունների սահմանափակումներով: Ուստի զինված ընդհարումների ժամանակ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունն առանցքային խնդիր է, որի լուծման միակ ճանապարհը ՄՄԻ-ի նորմերի անվերապահ կատարումն է:

Իրավաբանական նորմերի ցանկացած համակարգ, անկախ դրա մշակվածության աստիճանից, չի կարող գոյատևել, եթե այն չունի ազդեցություն հասարակական կյանքի վրա: Իրավունքը պարզապես ոչինչ է, եթե դրա դրույթները չեն իրացվում մարդկանց գործունեության մեջ և հասարակական հարաբերություններում<sup>2</sup>:

ՄՄԻ-ի դրույթների իրացումն անհնար է առանց միջազգային իրավունքի համակարգում դրա դերի և նշանակության սահմանման:

Դարեր շարունակ պատերազմի իրավունքը միջազգային հարաբերությունների համակարգում զբաղեցրել է իր ուրույն տեղը: Ժամանակակից միջազգային հարաբերություններում ՄԱԿ-ի կանոնադրությամբ ռազմական գործողությունների արգելքի պարագայում ՄՄԻ-ի գոյությունը միջազգային իրավունքի դաշտում առաջին հայացքից փոքրինչ անտրամաբանական է թվում, քանի որ այն կիրառվում է միայն զինված ընդհարումների ժամանակ, այսինքն՝ միջազգային իրավունքի խախտ-

ման առկայության պարագայում: Մինչդեռ ՄՄԻ-ի արդյունավետ գոյության և գործուն լինելու պատճառը իրականությամբ թելադրված անհրաժեշտությունն է:

Այսօր՝ արդեն XXI դարի սկզբին, ցավոք, պետք է արձանագրենք, որ մարդկությունը, չնայած դարեր շարունակ գործադրված մեծ ջանքերին, դեռևս կանգնած է քաղաքական խնդիրները պատերազմների միջոցով լուծելու իրողության առաջ: Այս հիմնախնդրով զբաղվող միջազգային կազմակերպություններից առավել ազդեցիկը՝ ՄԱԿ-ը, չնայած ձեռնարկված իրավական և քաղաքական բազմաթիվ միջոցներին, միջազգային զինված ընդհարումների կանխարգելումը չհաջողեց:

Ձինված ընդհարումների անխուսափելիությունից դրդված և զիտակցելով սեփական անվտանգության խնդիրները՝ պետությունները ստեղծեցին միջազգային միություններ, որոնց շրջանակներում էլ ձևավորվեցին ժամանակակից ՄՄԻ-ի նորմերը:

Այսինքն՝ միջազգային իրավունքի համակարգում ՄՄԻ-ի գոյության տրամաբանությունը հետևյալն է. «Պատերազմն անօրինական է, սակայն եթե պատերազմը սկսվել է, այն պետք է վարվի սահմանված կանոններով»:

Անշուշտ, սխալմունք չի լինի ասել, որ ՄՄԻ-ի գոյությունն ինքնին ի ցույց է դնում կիրառման բարդությամբ պայմանավորված միջազգային իրավունքի՝ որպես իրավական դիսցիպլինի անկատարությունը:

Իմպլեմենտացիա (*անգլերեն՝ implementation կատարում, կիրառում*)՝ լայն իմաստով նշանակում է պետությունների կողմից միջազգային իրավունքի

նորմերի՝ ազգային իրավական համակարգ ներմուծումը և կատարումը:

ՄՄԻ-ի իմպլեմենտացիայի միջոցները ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական մակարդակներում ուղղակիորեն արտացոլում են ոչ միայն պետության կողմից նշված ոլորտի միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման աստիճանը, այլ նաև միջազգային իրավունքի նախանշումները կատարելու հարցում տվյալ պետության պատրաստակամությունն առհասարակ:

Վ.Ա. Բատիրը ՄՄԻ-ի իմպլեմենտացիայի մեխանիզմը սահմանում է որպես ՄՄԻ-ի նորմերի իրացման ընթացակարգը սահմանող, պետական մարմինների կազմակերպարական գործունեությունը և ՄՄԻ-ի նորմերի իրականացման հետ կապված իրավակիրառ պրակտիկական կանոնակարգող ներպետական իրավունքի նորմերի ամբողջություն, որն ուղղված է պետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների փաստացի կատարման ապահովմանը:

Պետությունների սուվերեն հավասարության և անկախ ներքին ու արտաքին քաղաքականություն իրականացնելու միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներով է պայմանավորված այն հանգամանքը, որ պետությունները, միաժամանակ հանդիսանալով միջազգային իրավանորմերի ստեղծողներ, հանդես են գալիս որպես այդ նորմերի իմպլեմենտացիայի հիմնական սուբյեկտներ:

1949 թ. Ժնևյան կոնվենցիաներում և դրանց լրացուցիչ արձանագրություններում ընդգրկված միջազգային իրավանորմերի մեծամասնությունն իրացվում են ազգային իմպլեմենտացիայի մեխանիզմների միջոցով:

Սակայն պետք է նշել, որ միջազգային իրավունքի նորմերի իմպլեմենտացիան ազգային մակարդակով թեև հիմնական, սակայն միակ ճանապարհը չէ: Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերով ամրագրված են նաև միջազգային մակարդակով իրավանորմերի իմպլեմենտացիա ապահովող կազմակերպչական միջոցներ, որոնց ամբողջությունը կազմում է ՄՄԻ իրավանորմերի իմպլեմենտացիայի միջազգային մեխանիզմը:

Ուկրաինացի իրավագետ Ա.Ս.Գավերդովսկին «Միջազգային իրավունքի իմպլեմենտացիա» մենագրության մեջ նշում է, որ միջազգային իմպլեմենտացիայի մեխանիզմը պետությունների ջանքերով ստեղծված միջազգային իրավական նորմերի իրացմանն ուղղված միջոցների ընդհանրությունն է»:

ՄՄԻ-ի իրացման խնդրի ենթատեքստում վերոնշյալ սահմանումը բնականաբար չի ընդգրկում իրավահարաբերությունների ամբողջ այն դաշտը, որն առաջանում է ՄՄԻ նորմերի իմպլեմենտացիայի գործընթացներում: Այն վերաբերում է պետու-

թյանը՝ նախ և առաջ որպես միջազգային իրավունքի սուբյեկտի:

Իսկապես միջազգային մակարդակով միջազգային իրավունքի իրացման հիմնական միջոցները պետությունների կողմից ձեռնարկված այն բոլոր միջոցներն են, որոնց նպատակը միջազգային պարտավորությունների կատարման ապահովումն է:

Միաժամանակ հարկ է նշել մարդասիրական կոնվենցիաների էական առանձնահատկությունն առ այն, որ պետությունների ստանձնած պարտավորությունները միակողմանի բնույթի են, ինչն ամրագրված է Ժնևյան կոնվենցիաների ընդհանուր 1-ին և I-ին լրացուցիչ արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետում, համաձայն որի՝ «Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են ցանկացած հանգամանքներում պահպանել և ստիպել պահպանելու սույն կոնվենցիան»:

Ժնևյան կոնվենցիաների և դրանց լրացուցիչ արձանագրությունների մեկնաբանություններում առանձնացվում են պետությունների պարտավորությունների միակողմանիության տեսակետը. «Անմիջապես ստանձնելով պարտավորություն՝ պայմանավորվող կողմերը ընդգծում են, որ Կոնվենցիան փոխադարձության վրա հիմնված պայմանագիր չէ, որը մի պետությունը կապում է այլ պետության կամ պայմանավորվող կողմերի հետ այնքանով, որքանով վերջիններս կատարում են իրենց պարտավորությունները, այլ միջազգային հանրության առջև հանդիսավոր ստանձնած միակողմանի պարտավորություններ, որոնք ներկայացվում են պայմանավորվող կողմերին: Յուրաքանչյուր պետություն ստանձնում է պարտավորություններ ինչպես իր, այնպես էլ այլ պետությունների նկատմամբ»:

Այլ կերպ ասած, Ժնևյան կոնվենցիաների և I-ին լրացուցիչ արձանագրության կատարումը պայմանավորված չէ այլ մասնակիցների կողմից պարտավորությունները կատարելու հետ, և Ժնևյան կոնվենցիաների յուրաքանչյուր մասնակից իրավասու է բացատրություն պահանջել խախտված դրույթների վերաբերյալ և խախտող կողմին պատասխանատվության կանչել:

Այսպիսով, ՄՄԻ-ի նորմերի միջազգային իմպլեմենտացիայի մեխանիզմի տակ հասկացվում է իրավական և կազմակերպական միջոցների համակարգ, որը ստեղծվում է ինչպես պետությունների համատեղ ջանքերով, այնպես էլ ՄՄԻ-ի շրջանակում ստանձնած պարտականությունների բազմակողմանի և լիարժեք իրացման նպատակով անհատապես կիրառվող միջոցներով:

Ժնևյան կոնվենցիաների և դրանց լրացուցիչ արձանագրությունների համաձայն՝ միջազգային մակարդակով ՄՄԻ-ի իրացման ապահովմանն ուղղված են հետևյալ միջոցները.

1) ՄՄԻ-ի իրացման միջազգային ընթացակարգային իրավական միջոցները (հետաքննու-

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

թյունները)

2) I-ին լրացուցիչ արձանագրության 90-րդ հոդվածի համաձայն փաստերի բացահայտումը

3) հովանավոր տերության կամ փոխարինորդի նշանակումը:

4) միջազգային ինստիտուցիոնալ իրավական միջոցները (միջազգային տրիբունալները, միջազգային քրեական դատարանը)

5) պատերազմի զոհերի պաշտպանությանը նպաստող պետությունների կողմից համատեղ կամ անհատական միջոցների ձեռնարկումը, այդ թվում նաև միջազգային կազմակերպությունների շրջանակում կիրառվող միջազգային իրավական միջոցները :

Հետաքննության մեխանիզմները նորույթ չեն ՄՄԻ-ում, և ներկայումս գոյություն ունեցող մեխանիզմները հիմնադրվել են դեռևս 1929 թ. Ժնևյան կոնվենցիայի 30-րդ հոդվածով, որը թույլ էր տալիս Կոնվենցիայի խախտման դեպքում հետաքննության անցկացումը: Խոսքը գնում է Կոնվենցիայի ցանկացած խախտման առթիվ կողմերից մեկի խնդրանքով երկկողմանի հետաքննության մասին: 1949թ. Ժնևյան կոնվենցիաների թիվ 52, 53, 132, 145 հոդվածների համաձայն, ընդհարման մեջ գտնվող կողմերից մեկի խնդրանքով՝ կոնվենցիայի խախտման ցանկացած պնդման մասին պետք է սկսվի հետաքննություն այն ընթացակարգով, որը փոխադարձ համաձայնությամբ կսահմանեն շահագրգիռ կողմերը:

1977 թ. Լրացուցիչ արձանագրության ընդունման ժամանակ և 90-րդ հոդվածով նախատեսվել է փաստերի բացահայտման միջազգային հանձնաժողովի ստեղծումը, որն իրավասու է հետաքննել 1949 թ. Ժնևյան կոնվենցիաների և I Լրացուցիչ արձանագրության լուրջ խախտումների փաստերը:

ՄՄԻ խախտումների հետաքննության հարցում հիմնական առաջընթացը կայանում է նրանում, որ հանձնաժողովը պետք է հետաքննի 1948 թ. Ժնևյան կոնվենցիաների և I-ին Լրացուցիչ արձանագրության լուրջ և կոպիտ խախտումների՝ վերաբերյալ բոլոր հայտարարությունները՝ նույնիսկ առանց կողմերի համաձայնության<sup>10</sup> :

Միաժամանակ հարկ է նշել, որ Հանձնաժողովը դատական մարմին չի հանդիսանում և հետևաբար որոշումներ չի կայացնում, ընդամենը հետաքննության արդյունքների մասին (մեկնաբանություններով հանդերձ) հայտնում է շահագրգիռ կողմերին:

Վերահսկողական հնագույն մեխանիզմներից է հովանավոր տերությունների ինստիտուտը: Հովանավոր տերությունների ծագման վերաբերյալ առաջին տեղեկությունները սկիզբ են առնում XVI դարից: XIX դարում և XX դարի սկզբին, միջազգային սովորույթի վրա հիմնված, պետությունների կողմից ինչ-որ չափով ճանաչում ստացած այս ինստիտուտը գլխավոր վերահսկողական մեխանիզմ

էր հանդիսանում<sup>12</sup> :

Հովանավոր տերության եզրույթի տակ հասկացվում է պետություն, որին մեկ այլ պետություն (ծագման երկիրը) հանձնարարում է պաշտպանել իր և իր քաղաքացիների շահերը երրորդ երկրի առաջ (տիրություն, որի իշխանության տակ են գտնվում հովանավորող անձինք)<sup>13</sup> :

Պատերազմական վիճակում այս ինստիտուտը առաջին անգամ գործողության մեջ դրվեց 1870 թ. Ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ:

Չնայած որ 1949թ. Ժնևյան կոնվենցիայով զգալիորեն բարելավվեցին և ընդլայնվեցին հովանավոր տերության լիազորությունները, այդուհանդերձ տարիների փորձն ի ցույց դրեց հովանավոր տերության համակարգի ցածր արդյունավետությունը:

Իրավիճակն էլ ավելի բարելավելու, հովանավոր տերության նշանակությունն ուժեղացնելու նպատակով ընդունվեց 1977թ. I Լրացուցիչ արձանագրության հովանավոր տերությունների և դրանց փոխարինողի նշանակման կարգը սահմանող 5-րդ հոդվածը, համաձայն որի՝ հովանավոր տերության նշանակումը և դրա ընդունումը հակառակ կողմի համար պարտադիր է:

I Լրացուցիչ արձանագրությունը որոշ չափով վերացնում է վերոնշյալ խոչընդոտները, սակայն պնդել, որ այն հնարավորություն է ընձեռում հովանավոր տերության ինստիտուտի լիարժեք կայացմանն ու անթերի գործունեությանը, իհարկե, դեռ վաղ է:

Հովանավոր տերություն նշանակելու հարցում հակամարտության կողմերը միշտ չէ, որ հանգում են երկուստեք ընդունելի որոշման, ուստի հնարավոր դժվարություններից խուսափելու համար 1949 թ. Ժնևյան կոնվենցիաների թիվ 10, 11 ընդհանուր հոդվածներով նախատեսված է հովանավոր տերությունների փոխարինողներ նշանակելու հնարավորություն:

Իրենց բովանդակությամբ ընդհանուր այս հոդվածների առանձնահատկությունը կայանում է նրանում, որ հովանավոր տերություն նշանակելու անհնարինության դեպքում տերությունը, որի իշխանության տակ են գտնվում հովանավորվող անձինք, պետք է խնդրանքով դիմի մարդասիրական կազմակերպությանը կամ պետք է ընդունի մարդասիրական խնդիրների լուծումն իր վրա վերցնելու վերաբերյալ մարդասիրական կազմակերպության առաջարկը: Ընդ որում, խոսքը վերաբերում է միայն հովանավոր տերության ակնհայտ մարդասիրական բնույթի գործառույթներին:

Ժնևյան կոնվենցիաների և դրանց I Լրացուցիչ արձանագրության դրույթների իրականացումը գործնականում ստանձնել է ԿԽՄԿ-ն, և հովանավոր տերությունների համակարգում այն կարող է հանդես գալ որպես փոխարինող, ինչպես նաև գործել ինքնուրույն՝ համակարգից դուրս:

Ժնկյան կոնվենցիաների ընդհանուր 10-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ ԿԽՄԿ-ն վկայակոչվում է որպես «մարդասիրական կազմակերպության» օրինակ, սակայն Կոնվենցիաների ընդունումից ի վեր որևէ կազմակերպություն չի նշանակվել փոխարինող:

Հայտնի է, որ ԿԽՄԿ-ն բազմիցս ներկայացրել և ապացուցել է անկողմնակալության բոլոր երաշխիքները, ուստի այդ ամենը վկայում է այն մասին, որ ԿԽՄԿ-ն կարող է հավակնել հովանավոր տերության փոխարինողի դերին:

Եթե նույնիսկ ընդունենք, որ ԿԽՄԿ-ն եզակի դեպքերում է հաջողել հովանավոր տերության բոլոր խնդիրների իրականացման հարցում, այդուհանդերձ հարկ է նշել, որ տարբեր հանգամանքներում կազմակերպությունը De facto կատարել է Հովանավոր տերության փոխարինողի գործառույթները: Սակայն քանի որ այդ գործառույթների իրականացումը ուղղակիորեն չի բխում Ժնկյան կոնվենցիաների և I Լրացուցիչ արձանագրության իրավանորմների տառից, ուստի պետք է արձանագրենք, որ ԿԽՄԿ-ի կողմից կատարված գործառույթները չեն համարվում De jure<sup>14</sup>:

ՄՄԻ-ի իմպլեմենտացիայի հիմնական նպատակը ՄՄԻ-ի իրացման ապահովումն է, ինչպես պետությունների, այնպես էլ ֆիզիկական անձանց կողմից: Ֆիզիկական անձանց կողմից ՄՄԻ-ի լուրջ խախտումների կանխման միջոցներ են միջազգային ինստիտուցիոնալ իրավական միջոցները. դրանք են միջազգային տրիբունալները և Հռոմի ստատուտի հիման վրա գործող միջազգային քրեական դատարանը, որը գործում է այն դեպքերում, երբ ազգային դատական համակարգը բացակայում է, կամ վերջիններս չեն կարող իրականացնել իրենց գործառույթները:

ՄԶԴ-ն կոչված է սահմանված միջազգային ընթացակարգով անձանց քրեական պատասխանատվության ենթարկելուն, այդ թվում՝ նաև զինված ընդհարումների ժամանակ մարդու իրավունքներն ու ազատությունները խախտելու մեջ մեղադրվող անձանց:

ՄՄԻ-ի միջազգային իմպլեմենտացիայի մեխանիզմ է հանդիսանում նաև զինված հակամարտությունների գոհերի պաշտպանությանը նպաստող պետությունների կողմից համատեղ կամ անհատական միջոցների ձեռնարկումը: I Լրացուցիչ արձանագրության 89-րդ հոդվածը ՄՄԻ-ի լուրջ խախտումները կանխելու ուղղությամբ լայն հնարավորություններ է ընձեռում մասնակից կողմերի համար. «Կոնվենցիաների կամ սույն արձանագրության լուրջ խախտումների դեպքերում բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են ձեռնարկել ինչպես համատեղ այնպես էլ ինքնուրույն միջոցներ Միավորված ազգերի կազմակերպության հետ համագործակցության ասպարեզում և Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը համապատասխան»:

ՄՄԻ դրույթների կատարումն ապահովելու հարցում կարևոր դերակատարություն ունեն միջազգային կազմակերպությունները, մասնավորապես ՄԱԿ-ը: ՄՄԻ-ի լուրջ խախտումների դեպքում խախտված իրավունքների ապահովմանն ուղղված ցանկացած պետության գործադրած ջանքերի արդյունավետությունը կասկածելի է առանց պետությունների քաղաքական համագործակցության, իսկ ՄԱԿ-ը ժամանակակից աշխարհում հանդիսանում է համագործակցության առավել լայն կիրառվող միջոցներից<sup>15</sup>:

ՄՄԻ-ի նորմերի միջազգային մակարդակով իմպլեմենտացիայի ուղղությամբ պետությունների համագործակցության օրինակ է նաև Անկախ պետությունների համագործակցությունը (ԱՊՀ): Կազմակերպության կարևոր մարմիններից է ԱՊՀ Միջխորհրդարանական վեհաժողովը (ՄԽՎ), որը 1993թ. առ պյսօր սերտ համագործակցում է ԿԽՄԿ-ի հետ<sup>16</sup>: Հարկ է նշել, որ համագործակցության շրջանակներում մշակվել են ՄՄԻ-ի ԱՊՀ մասնակից-պետությունների ազգային օրենսդրություններ իմպլեմենտացիայի վերաբերյալ, բազմաթիվ տիպային իրավական ակտեր և խորհրդատվություններ:

Ելնելով Ժնկյան կոնվենցիաների գրեթե համընդհանուր վավերացման հանգամանքից և դրանից բխող մարդասիրական սկզբունքների անվերապահ բնույթից՝ բոլոր պետություններն իրավասու են ապահովելու մարդասիրական սովորույթային իրավունքի պահպանումը ցանկացած այլ պետության միջոցով<sup>17</sup>:

1968 թ. Թեհրանում տեղի ունեցած Մարդու իրավունքների կոնֆերանսում ընդունված որոշումն ընգծում է, որ Կոնվենցիաների պահպանության ապահովման պարտավորությունը դրված է նույնիսկ զինված ընդհարման մասնակից չհանդիսացող պետությունների վրա<sup>18</sup>:

ՄՄԻ-ի խախտումներ թույլ տված հակամարտության կողմի հանդեպ պետության կամ պետությունների կողմից համատեղ ձեռնարկված օրինական միջոցների թվին են դասվում նաև դիվանագիտական ճնշումների հետ կապված միջոցառումներն ու հարկադրանքի միջոցները:

ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովը, որը նման գործողությունները անվանում է «հակընդդեմ միջոցներ», գտնում է, որ նախնական գործողությունների անօրինականությունը հանդիսանում է ձեռնարկված հակընդդեմ միջոցների անօրինականությունը նախօրոք բացառող հանգամանք<sup>19</sup>:

Հարկադրական միջոցներից խոսելիս անհրաժեշտ է նշել, որ դրանք կարող են լինել միայն միջազգային իրավունքի տեսանկյունից թույլատրելի միջոցները: Այլ կերպ ասած՝ դրանք կարող են լինել միայն այնպիսի միջոցներ, որոնք համապատասխանում են ստորև նշված պահանջներին.

- ուղղված լինեն անօրինական գործողու-

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

թյուն կատարելու համար պատասխանատու պետության դեմ,

• իրականացվեն իրավախախտ պետությանն ուղղված նշված գործողությունը դադարեցնելու պահանջ բովանդակող նախագրու շարժումից հետո,

• ձեռնարկված միջոցները պետք է լինեն համաչափ և համահունչ մարդասիրության հիմնական սկզբունքներին:

• կրեն ժամանակավոր բնույթ, դադարեցվեն համապատասխան պետության կողմից միջազգային իրավունքի խախտելը դադարեցնելուն պես<sup>26</sup>:

Ժամանակակից միջազգային հանրությունը ընդունել է այն կանոնը, որ պետության (պետությունների) կողմից կիրառվող ռազմական բնույթի հակամիջոցներն անօրինական են, և միակ մարմինը որն իրավասու է թույլատրել զինված ուժի կիրառումը, ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդն է: Օրինակ, 1990-1991թթ. Պարսից ծոցի զինված հակամարտության ժամանակ 1990թ. նոյեմբերի 29-ի Անվտանգության խորհրդի թիվ 678 բանաձևի համաձայն կուլիցիոն ուժերի կողմից, ի պատասխան Իրաքի ագրեսիայի, ձեռնարկվեցին ռազմական գործողություններ:

Նմանատիպ գործողություններն Անվտանգության խորհրդի կողմից թույլատրվում են նախևառաջ զինված ընդհարման ժամանակ մարդասիրական իրավունքի ապահովման նպատակով՝ ՄԱԿ-ի Կանոնադրության, այլ ոչ ՄՄԻ-ի հիման վրա, և երկրորդ՝ այդ գործողությունների գլխավոր և Կանոնադրության VII գլխով միակ թույլատրելի նպատակը անհրաժեշտության դեպքում միջազգային խաղաղության և անվտանգության վերականգնումն է:

Նման հանգամանքներում ուժի կիրառման օրինականությունը խիստ պայմանավորված է նշված նպատակով և չի կարող բխել ՄՄԻ-ի որևէ նորմից և նույնիսկ I Լրացուցիչ արձանագրության 89-րդ հոդվածից<sup>27</sup> »:

ՄՄԻ-ի նորմերը նպատակաուղղված են ցանկացած բնույթի զինված ընդհարման գոհերի իրավունքների պաշտպանությանն ու նրանց տառա-

պանքները թեթևացնելուն, հետևաբար ենթադրել, որ այդ նույն իրավունքով կթույլատրվի ցանկացած ռազմական ուժի կիրառում, անտրամաբանական է և իրավաբանական տեսանկյունից անընդունելի:

Հարկ է նշել, որ ՄՄԻ-ն կիրառելի է մաս Անվտանգության խորհրդի կողմից որպես հակընդդեմ միջոց՝ թույլատրված ռազմական գործողությունների ժամանակ<sup>28</sup>:

Վերոգրյալն ամփոփելով՝ կարելի է ասել, որ ՄՄԻ-ի միջազգային մակարդակով իմպլեմենտացիայի ուղղությամբ ստեղծված է միջազգային իրավական փաստաթղթերի բավականին մեծ բազա, իսկ պատերազմի օրենքներն ու սովորույթները ամփոփված են դոկտրինալ մակարդակով:

Ներկա դրությամբ ՄՄԻ-ի կարևորագույն խնդիրներից է ռազմական գործողությունների ժամանակ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանն ուղղված իրավանորմերի իրագործումը: Նշված նորմերի իրականացումը ենթադրում է համալիր միջոցների ձեռնարկում. նախ և առաջ պետությունների կողմից միջազգային իրավունքի նորմերի ներմուծում ազգային օրենսդրություն՝ իմպլեմենտացիա, և այդ գործընթացը վերահսկող հատուկ մարմինների ստեղծում:

Երկրորդ խնդիրը ռազմական գործողություններին միատեսակ, համարժեք գնահատական և որակավորում տալու ուղղությամբ միջազգային մակարդակով միջոցների ձեռնարկումն է: Երրորդը հակամարտող կողմերին միջազգային իրավունքի նորմերը պահպանելու ուղղությամբ պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից պարտադրվող միջոցների ձեռնարկումն է: Եվ վերջապես, չորրորդ կարևոր միջոցը միջազգային իրավունքի ուժով արդեն իսկ ստեղծված ՄՄԻ-ի նորմերի խախտման համար պետությունների միջազգային պատասխանատվության ինստիտուտի կատարելագործումն է, քանի որ պատասխանատվության իրական գործող մեխանիզմները զինված ընդհարումների ժամանակ պետությունների կողմից ՄՄԻ-ի և ՄԻՄԻ-ի նորմերի խախտումները զսպող կարևոր գործոն են:

<sup>1</sup> Տե՛ս Գարվերդովսկիյ Ա.Ս. Имплементация норм международного права. Киев: Вища школа, 1980. С.47.  
<sup>2</sup> Տե՛ս Явич Л.С. Общая теория права. Л. // Издательство ЛГУ, 1976. С. 201.  
<sup>3</sup> Տե՛ս Ив Сандо. Выполнение международного гуманитарного права// Имплементация международного гуманитарного права. Сборник статей и документов. М. 1998. С.213.  
<sup>4</sup> Տե՛ս Վ. Հովհաննիսյան: Քրեական արդարադատության սկզբունքները միջազգային իրավունքում // Էվոլյուցիան և իմպլեմենտացիայի առանձնահատկությունները: Երևան 2011, էջ 310:  
<sup>5</sup> Տե՛ս Батырь В.А. Имплементация норм международного гуманитарного права в военном законодательстве РФ: Автореферат дис. канд. юрид. наук М.: Военный ун-т, 1999. С.18.  
<sup>6</sup> Տե՛ս Գարվերդովսկիյ Ա.Ս. Указ соч. С.54.  
<sup>7</sup> Տե՛ս David E. Principes de droit des conflict armes. Bruxelles: Bruylant, 1994. P. 408.  
<sup>8</sup> Տե՛ս Commentary III Geneva convencion. Geneva: ICRC, 1994. P. 17-18.  
<sup>9</sup> Տե՛ս Калугин В.Ю. Международный механизм имплементации международного гуманитарного права: определение,



понятия и классификация правовых средств//Российский ежегодник международного гуманитарного права.2004 (Специальный выпуск).СПб., 2005. С.17.

<sup>10</sup> Տե՛ս «լուրջ խախտում» եզրույթն (infraction grave) ունի հստակ նշանակություն և ներառում է Ժնևի IV կոնվենցիայի 147-րդ հոդվածում թվարկված խախտումները, մինչդեռ «կոպիտ խախտում» (violation grave) եզրույթն օգտագործվում է ընդհանուր իմաստով՝ սվյալ խախտման որակումը թողնելով հսնձնաժողովի սահմանմանը:

<sup>11</sup> Տե՛ս Ив Сандо. Выполнение международного гуманитарного права //Имплементация международного гуманитарного права.М., МККК,1998. С. 241.

<sup>12</sup> Տե՛ս Commentary I-st Geneva convention. Geneva. ICRC,1994.P 86.

<sup>13</sup> Տե՛ս Commentary I-st Geneva convention. Geneva. ICRC,1994.P.94.

<sup>14</sup> Տե՛ս Ив Сандо. Выполнение международного гуманитарного права //Имплементация международного гуманитарного права.М., МККК,1998. С. 235.

<sup>15</sup> Տե՛ս Палванкар Умеш. Указ.соч. С. 359-360.

<sup>16</sup> Տե՛ս Котляров И.И. Международное право и вооруженные конфликты. М.: Московский университет МВД России, 2003. С.186.

<sup>17</sup> Տե՛ս Military and Paramilitary Activities in and Against Nicaragua (Nicaragua v.USA, Merits Judgement, ICJ Reports, 1986, § 220.

<sup>18</sup> Տե՛ս ՏՄ.23 –я резолюция Международной конференции по правам человека, Тегеран,1968г.

<sup>19</sup> Տե՛ս Yearbook of international Law Comission, 1979, vol II, p. 115.,Տես նաև Միջազգային սայնմնագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969թ. կոնվենցիայի 60-րդ հոդվածի 1-4-րդ կետերը:

<sup>20</sup> Տե՛ս Палванкар Умеш. Указ.соч. С. 355-356.

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 362-363:

<sup>22</sup> Տե՛ս International Review of the Red Cross ,N 296, September-October 1993.c. 3.1.3.

**Нарине Карапетян**

Соискатель юридического факультета ЕГУ,  
старший офицер юридического управления МО, подполковник

**РЕЗЮМЕ**

***Международные средства осуществления (имплементации) гуманитарного права***

Исходя из необходимости осуществления защиты основных прав и свобод человека во время вооруженных конфликтов автор подчеркивает важность осуществления норм международного гуманитарного права. В статье рассматриваются те основные средства имплементации международного гуманитарного права (МГП), которые применимы на международном уровне, а также проблемы связанные с осуществлением указанных мер на практике. В контексте существующих международно-правовых механизмов обособляется роль совместной деятельности и взаимопомощи государств-участников в вопросе соблюдения гуманитарного права, как основного международного средство имплементации МГП. В заключении подчеркивается необходимость усовершенствования института международной ответственности государств, как превентивное средство нарушений норм МГП и прав человека.

**Ключевые слова:** *имплементация МГП, вооруженный конфликт, гуманитарное право, права человека, механизмы имплементации.*

**Narine Karapetyan**

The Applicant of Faculty of Law YSU,  
Senior officer of the Legal Department of MOD, Colonel

**SUMMARY**

***The International methods of implementation of humanitarian law***

Based on the need of the protection of fundamental human rights and freedoms in times of armed conflict, the author emphasizes the importance of the implementation of international humanitarian law. This article treats the basic means of implementation of international humanitarian law (IHL) applicable at the international level, as well as problems related to the implementation of these measures in practice. In the context of existing international legal mechanisms stands apart the role of collaboration and mutual support of States Parties on the issue of respect for humanitarian law, as the main international means of the implementation of IHL. In conclusion emphasizes the need to improve the Institute of international responsibility of the states as a preventive agent of violations of IHL and human rights.

**Keywords:** *Implementation of IHL, armed conflict, humanitarian law, human rights, mechanisms for implementation.*